ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298, բարտուղարություն 374-001, ֆաքս 370-296

№ 4/117 «15» 02 2022 թ.

Ձեր

«Անգա-Տրանս» ՍՊԸ-ի տնօրեն
Վ. Մելիք-Սարգսյանին
ՀՎՀՀ (03556198)
ՀՀ գ. Առինջ, Պ. Սևակի 6 փ. 7/1 շին.
էլ. հասցե՝ angatrans2021@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության զորքերի և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի կողմից «Տեխնիկական բնութագիր»-ի 2-րդ չափաբաժնով նախատեսված՝ «Կոստյումներ, բաճկոն-տաբատ գունաքողարկող, սև՝ կիսաբամբակյա կեպիով» ապրանքատեսակը մատակարարվել է տեխնիկական բնութագրի պահանջներին անհամապատասխան:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի՝ Պատվիրատուն /Գնորդը/ իրավունք ունի միակողմանի /կամ մասնակի/ լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի /Գնորդի/ համար ընդունելի ժամկետում: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2022

թվականի փետրվարի 14-ին մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության զորքերի և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի միջև 17.08.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/8/ԻԾ-1» ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը սահմանված կարգով կներկայացվեն «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ՝ չմատակարարված ապրանքի ընդհանուր գումարի մասով հաշվարկված տույժը՝ 26 250 (քսանվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝

գնդապետ ***Հ. Բաբայան***

Կատարող՝ Հ. Եղիկյան
Հեռ. (010) 37-40-14